

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 բուրլ կէս տարվանը 6 բուրլ
Առանձին համարները 5 կոպէկով:

Ռիֆլիտում գրվում են միայն խմբագրատան մէջ:

(Պարագրաֆացիք դիտում են ուղղակի
Тифлис. Редація „Мусака“

Խմբագրատանը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն)

Հայտարարութիւն ընդունվում է ամէն լի գուրով:

Հայտարարութիւններէ համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՂԱՆԴԱՎՈՒԹԻՒՆ

Մեզ մեղադրել չէք կարող. — Ներքին առ-
տու թիւն: Մի նկատողութիւն: Կենդանիներէ
հովանաւորութեան ընկերութիւնը, Նամակ Բա-
ղուց: Ներքին լուրեր: — Արտաքին տեսու-
թիւն: Տարուսի ստորոտէն ձայն: — Վշտակի հե-
ռագրիւն: — Յայտարարութիւններ: — Բանասի-
րական խնդիր:

ՄԵՋ ՄԵՂԱԴՐԵԼ ՉԷՔ ԿԱՐՈՂ

Եւս լուրը, որ մեր տեղական
Հայ լրագիրներին արգելեցաւ
Թիւրքաց տէրութեան կողմից
Թիւրքիայի սահմանի մէջ մտնելը,
պաշտօնապէս ստոյգ յայտնվեցաւ:
Մենք մեր ուրիշ պարբերական
հրատարակութիւններէ կողմից
խօսել իրաւունք չունենք. — Թո՛ղ
նրանք իրանք իրանց արդարաց-
նեն, — բայց «Մշակի» կողմից մենք
կարող ենք վկայել, որ թէ մենք
թմրութեան շարունակ յարձակ-
վում էինք Թիւրքաց կառավարու-
թեան դէմ, մենք այդ արել ենք
նախ ոչ թէ իրան Սուլթանի
անձնաւորութիւնը վերաւորելու
համար, ինչպէս այդ սովորութիւն
ունեն անել Թիւրքաց լրագիրները

օտար պետութիւններէ թաղա-
ւորներէ դէմ, երկրորդ՝ մեր ա-
սածները մեր գլխից հարած, ե-
րեակայական փաստերի վրա հիմն-
ված չէին, այլ հաստատ իրողու-
թիւններէ վրա, որոնց մենք քա-
ղում էինք նոյն իսկ Թիւրքաց,
մեծ մասամբ պաշտօնական աղ-
բիւրներէ:
Բաւական է յիշել այստեղ
«Մշակի» վերջին երկու տարինե-
րի ամենանշանաւոր յօդուածները:
Փաստերը մենք առնում էինք
հաստատ և նոյն իսկ Թիւրքիա-
յում հրատարակված աղբիւրնե-
րից, իսկ մեր սեփական յօդուած-
ները, մեր դատողութիւնները
միայն հետեւանք էին այդ մեծ
մասամբ պաշտօնական աղբիւրներէ:
Վկանք 1877 թւի «Մշակի»
համարներէն և յիշենք այստեղ
ամենանշանաւոր և աչքի ընկնող
յօդուածները: Եւս Թւականի
«Մշակի» № 5 մէջ մենք արտա-
տպեցինք Վ. Պոլսի «Մշակ» լրա-
գրից մի յօդուած, որ նկարագրում
էր Թիւրքաց Հայաստանի թը-
շուա և հարստահարեալ դու-
թիւնը: «Մշակի» № 13 մէջ մենք

արտատպեցինք Վ. Պոլսի «Մշակ»
լրագրից մի յօդուած «Հա-
յոց ժողովրդի տանջանքներ» վեր-
նագրով, նոյն համարում կար և
մի նամակ Վանից, արտա-
տպված «Մանգուլէի Լճֆեար»
լրագրից: Մեր Թերթի № 31
մէջ ընթերցողները կարգացին մի
նամակ Վանից որ առնված լինե-
լով «Մանգուլէի Լճֆեար» լրա-
գրից, նկարագրում էր Թիւրքաց
Հայաստանի բրիտանաց ազգա-
բնակութեան թշուա և հարս-
տահարեալ դուրսութիւնը: Եւս նա-
մակներից շատերի մէջ նկարագր-
ված էր թէ Թիւրքաց տէրու-
թիւնը և Թիւրք գնեւորները ի-
րանք կրակ գցեցին Վանի մէջ,
դիտմամբ այրեցին այդ հայաբնակ
քաղաքը և այլն: Նոյն 1877 թւի
«Մշակի» 55—58 համարների
մէջ տպվեցաւ ականատես հե-
ղինակի յօդուածների մի շարք,
որտեղ նկարագրված էին ամենա-
սարսափելի բարբարոսութիւններ և
հարստահարութիւններ, որ Թիւր-
քերը և բիւրդերը գործում էին
Հայաստանում:
Նոյն թւին հրատարակեցան

Վ. Պոլսի մէջ Հայոց նախկին
պատրիարք Խրիսեան Հայրիկի եր-
կու բրոշուրներ, որոնցից «Վան-
պոյժ» բրոշուրը ամենանշանաւորն
է, և որ նկարագրելով Հայերի
տանջանքները, և Թիւրքերի գոր-
ծած բարբարոսութիւնները, պարզ
մեղադրում է Թիւրքաց կառա-
վարութիւնը թէ նա է կրակ
տուել Վան քաղաքը և այն միտքն
է յայտնում թէ ճշնելով, ոչնչաց-
նելով Հայերի պէս իր ամենահա-
ւատարիմ հպատակ ազգութիւնը,
Թիւրքաց կառավարութիւնը բա-
ղաբական անձնասպանութիւն
է գործում, որովհետև ոչնչացնում
է իր կենսական աղբիւրը, իրան
պահող իրան կերակրող, աշխա-
տասէր ազգութիւնը:
Բացի այդ բոլոր աղբիւրներից
մեր դատողութիւնները հիմնվում
էին միշտ այն բազմաթիւ յօ-
դուածների և թղթակցութիւն-
ների վրա, որոնք սփռված էին
բոլոր եւրոպական և ուսսաց թէ
մայրաքաղաքի և թէ տեղական
լրագիրներում: Իսկ այդ թղթակ-
ցութիւններն ու յօդուածները,
միշտ հիմնվում էին պաշտօնական

Ի Ե Ն Թ Ը

ԱՐԿԱՆՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍՈՒԹՈՒՐԱԿԱՆ
ՊԱՏԵՐԱՋՄԻՅ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԹԼ:

Բոլորովին մոթն էր, երբ Հայրապետը և Սա-
ւան վերադարձան տուն: Նրանք խնայան, որ քօ-
մաս էֆէնդին վարդանի հետ ունեցած անբաւա-
կանութիւնից յետոյ դժգոհութեամբ հեռացել էր
իրանց տնից, և ձերուսի խաչուն այդ մասին շատ
անհանգիստ էր, վախճանով, մի գոցէ կապալա-
սուն իրանց համար մի շար որդապիլ լարէ:
Բայց վարդանը, չը նայելով իր դիւրբորբոսը և
դիւրագրիւն բնաստութեանը, այնքան անբաւա-
քավարի չէր, որ իրող տեղը անպատէր մէկին:
Նա համարում էր էֆէնդուն մի գարշելի մարդ, որ
թուրք կառավարութեան ներկայացուցիչների ձեռ-
քում գործիք դարձած, ծծում էր իր համազգիների
արիւնը, հարստահարում էր և աղքատացնում էր կայ-
նրանց: Բացի դրանցից, նրան յայտնի էր կապա-
լաւուսի անցեալը: Այդ մտաշարիկ խաբեան մի
և նոյն պաշտօնով եղել էր Հայաստանի շատ կող-
մերում, և իրաւ, շատ տեղերում պակվել էր,
իր կնիկներին թողել էր և շատ տեղերում խել-
քից հանել էր անմեղ աղջիկներին: Այժմ մի և
նոյն կեղտոտ նպատակներն ունէր և Լալայի վե-
րաբերութեամբ, և օգուտ քաղելով նրա հօր միա-
մտութիւնից, կամենում էր մի գզուկի դեր խա-
ղալ: Այդ, ի հարկէ, տանի չէր կորող վարդանը:

մասնանդ մի աղջկայ վերաբերութեամբ, որին
ինքը սիրում էր:
Բայց էֆէնդու շուտափոյն կերպով ձերուսի
խաչոյ տնից հեռանալու պատճառը միայն այն
չէր, որ նա անբաւակալութիւն ունեցաւ վար-
դանի հետ և չը կամեցաւ միտանալ տեսնել նրա
կրքը: Էֆէնդին բաւական համբերող էր դէպի
վերադարձներ. նա վաղուց սովորել էր լուռ-
թեամբ աննկ դրանից ակելի խիստ անարգանք-
ներ: Բայց նա այսօր մի առանձին սուրհանդակի
ձեռքով թուղթ ստացաւ, որով հրամայում էին
նրան հաւաքել իր ձեռքի տակ գտնված արեւնի
ցորեանները և գարինըր առաձին ամբարներում,
և բնաւ չը ծախել, որովհետև կառավարութեանը
պատրաստվում էր. այստեղ—պաշար, իսկ այն-
տեղ, ճաթթիւն-բէկի բանակի մէջ—զէնքեր...
Երբ տանը հիւր կար, ձերուսի խաչուն միշտ օ-
գայի մէջ էր անցկացնում և իր հիւրի ժողից չէր
հեռանում: Վարդանին խկապէս հիւրի տեղ չէին
դնում. նա տան տղայ էր: Բայց թօմաս էֆէնդու
զնայուց յետոյ նրա տանը յայտնվեցաւ մի նոր
հիւր: Դա մի երիտասարդ էր յինար և գունաթմափ
զէմբով, և թոյլ, ակելի քնքարչ կազմուածքով.— մի
երիտասարդ, որի արտաքին կերպարանքը մտածել
էր տալիս, թէ երկար տալիներ մաշվել և թառա-
մել էր դպրոցների նստարանի վրա: Ի՞նչ կոչումի
և ի՞նչ պարագլուստի մարդ էր դա, յայտնի չէր,
միայն այդանը յայտնի էր, որ փրկել է, հայ է,
և ձերուսի խաչուն պարտք էր համարում յարգել
մայրաքաղաքից եկած հային: Բայց ճանապարհոր-
դական փոքրիկ խուրջիցից նա իր հետ ուրիշ ո-
չինչ չունէր, և կիսամաշ եւրոպական հագուստը
էր տալիս, որ աղքատ մէկը պէտք է լինի:
Նրա բերող չարվարարը ձգեց նրան գիւղի մէջ և
հեռացաւ: Նա ման էր գալիս, որ իր համար գի-
չերկու մի օթեան գտնէ, երբ հանդիպեց վարդա-

նին: Ատում են, սրտերի մէջ մի գաղտնի ճանա-
պարհ կայ: Այդ երկու երիտասարդները կարճ
խօսակցութիւնից յետոյ մտերմացան, և որպէս մի
գաղտնի աղանդի պատկանող երկու անդամներ,
առանց նախապէս միմեանց հետ ծանօթ լինելու,
կերպարական ձեռք մեկնեցին միմեանց: Վարդա-
նը նրան վեր առաւ և ընդհանր ձերուսի խաչ ո՛ր
տունը:
Նոր հիւրը իրան կոչում էր Միքայէլ Գուղուկ-
ճեան: Որպէս տաճկաստանցոց բոլոր տոհմանուն-
ները առած են լինում հօր կամ պապի արհես-
տից, պարտնի հայրն էլ դուրսուկներ է չլինելու ե-
ղել, այսինքն մի տեսակ չլինել, որ երկխանիքը
առնէ են: Իսկպէս ձերուսի խաչոյն շատ դիւր
չկուս ոչ նրա տոհմանունը, որ դժուարութեամբ
էր արտասանում, ոչ նրա հիւանդոտ և գունաթմափ
դէմքը, ոչ նրա անհանգիստ աչքերը իրանց տնի-
ղային փայլով, և ոչ էլ նրա մթին ու ծածկամիտ
բնաստութիւնը, որ խկոյն կակած էր յարուցա-
նում: Բայց վարդանը ծածուկ ասել էր ձերու-
սուն, թէ դա տղայ է, երբ ճանաչեւ, կը սիրես
դրանս:
Մտնելով ձերուսի խաչոյ տունը, անձանօթ
հիւրը միայն մի բան հարցրեց վարդանից.
— Կարելի է հաւատալ դրանց...
— Կարելի է... պատասխանեց վարդանը:
Երբ օգայի մէջ ճորգը վառվեցաւ, գիւղական
սովորութեան համեմատ, խկոյն ընթրիք տուեցին:
Այս գիւղի սեղանակից էին ձերուսի հօր հետ նրա
բոլոր վեց որդիները, որովհետև թօմաս էֆէնդին
այնտեղ չէր, և մի ուրիշ բարձրաստիճան հիւր չը
կար, որի պատճառով որդիները համարակութիւն
չունենային սեղան նստելու: Վարդանը տան տղայ
էր համարվում, իսկ նոր հիւրի վրա նայում էին
որպէս մի մարդու վրա, որ այնքանով ևս զո՞ն
պէտք է լինէր, որ այս գիւղի կոչու փորով հայ
էր ուսելու:

Ընթրիքի ժամանակ խիստ ժխուր անցաւ: Վար-
դանը և նոր հիւրը համարեա չէին խօսում: Իսկ
ձերուսին նոյնպէս խիստ հաղիւ անգամ խօսք էր
փոխում իր որդիների հետ: Սեղանակիցների սըր-
տերը լցված էին զանազան տեսակ, միմեանցից
տարբեր ցաւերով: Չերուսին կապալաւուսի վրա
էր մտածում, թէ նա դժգոհութեամբ հեռացաւ իր
տնից, շարպետը գրազված էր բուրգ բէկով և
Լալայի միճակով: Նա կրկին մտքն էր բերում
Սառայի պատմութիւնը և մտածում էր, թէ ինչ
պէտք է անել, Չերուսու միւս որդիները մտա-
ծում էին իրանց մշակութիւնների վրա, թէ առա-
ւօտեան ո՞վ ինչ գործ պէտք է կատարէ: Վար-
դանի գլխի մէջ պտըտվում էր Լալայի գեղեցիկ
ուրուականը: Իսկ նոր հիւրը, Ատուած գիւղէ, թէ
ինչ բանի վրա էր մտածում...
Երբ սեղանը հաւաքեցին, Ստեփանիկը բերեց
իբրիլը և լազանը, իր ձեռքով ջուր ածեց, և տե-
ղային սովորութեան համեմատ, նրանք լուսոյն
իրանց ձեռքերը, դոհացան և փառք տուին: Առ-
ածուն: Չերուսին սկսեց ծխել իր երկայն չիբուխը,
իսկ պ. Գուղուկճեանը հանեց իր ծոցից մի գեղե-
ցիկ պորտուկաբ, որ ամենին չէր համապատաս-
խանում նրա նմանը հագուստին, և դուրս բերե-
լով նրա միջից մի թանկագին սիգար, երկար ե-
ղունցներով ծայրը կտրեց, և սկսեց ծխել: Փոք-
րիկ սենեակը լցվեցաւ հաւանեան ծխախոտի ա-
նուշոտութեամբ: Երբում էր, որ այդ մտողը մի
ժամանակ գուրկ չէ եղել կեանքի վախճանութիւննե-
րից, իսկ այժմ հանգամանքները ձգել էին նրան մի
տարբերակ կեանքի մէջ:
Ընթրիքից յետոյ խօսակցութեան առարկան թօ-
մաս էֆէնդին էր: Վարդանը մասնաւորապէս
պատմել էր պ. Գուղուկճեանին այդ մտղու մա-
սին, և այդ պատճառով խօսակցութեան առար-
կան նրան բաւական ծանօթ էր: Չերուսի խաչուն
խիստ քաղաքավարի կերպով նկատեց վարդանին,

տեղեկութիւնները վրա, որինակ Կ. Պօլսի հայոց ազգային ժողովի ղեկուցումների և հայոց պատրիարքի պաշտօնական բողոքների վրա: Բաւական է յիշել այստեղ „Тифл. Вѣстн.“ լրագրում 1876 թւին տպված մի շարք յօդուածների, որոնք հիմնված էին Կ. Պօլսի հայոց պատրիարքարանի և ազգային ժողովի պաշտօնական բողոքների վրա և հետեւեալ տարիների „Голосъ“ լրագրի հարուստ թղթակցութիւնները թիւրքաց հայերի թշուառ գրութեան մասին, որոնք իրանց տեղեկութիւնները նոյնպէս առնում էին պաշտօնական, ամենահաստատ աղբիւրներից:

Աւերորդ ենք համարում յիշել այստեղ այն բոլոր բարբարոսութիւնները, որ գործում էին թիւրքերը, քիւրդերը և չերկէզները ռուս-թիւրքաց պատերազմի ժամանակ... Կրանց այդ բարբարոսութիւնների նկարագրութեամբ, որ գործում էին թէ հայերի և թէ իրանց այլ հպատակ ազգութիւնների վերաբերութեամբ, լի էր ամբողջ աշխարհի մամուլը:

«Մշակի» 1878 թւի բոլոր յօդուածներից մենք կը յիշենք միայն Մէլեքզադէի յօդուածների մի շարք «Տեղեկագիրք» վերնագրով (№ № 145—150): Այդ յօդուածների բոլոր տեղեկութիւնները, հայոց ազգի վրա թիւրք կառավարութեան կողմից գործած ճշումները, բարբարոս-

թիւնները, վայրենութիւնները՝ առնված էին Կ. Պօլսի հայոց պատրիարքարանի պաշտօնական ղեկուցումներից:

Հետեւեալ 1879 թւին հրատարակվեցաւ «Մշակի» մէջ Գրիգոր Արծրունու դասախօսութիւնը, որ յետոյ թարգմանվեցաւ գերմաներէն լեզուով և շուտով լոյս կը տեսնի Մոսկվայում առանձին բրոշուրով ռուսերէն լեզուով: Այդ գրուածքի բոլոր տեղեկութիւնները, որոնք վերաբերվում են քիւրդերի և թիւրքերի վարմունքին հայերի հետ, նոյնպէս առնված են հայոց պատրիարքարանի պաշտօնական տեղեկագիրներից: Կոյն թւին մենք կարողացանք ձեռք բերել նոյն իսկ Կ. Պօլսում ֆրանսիերէն լեզուով հրատարակված «L'article 61» վերնագրով երկու թէ երեք կարմիր տետրակներ, որոնք ամփոփում էին իրանց մէջ Հայաստանի զանազան կողմերի հայ առաջնորդներից Կ. Պօլսի պատրիարքարանի մէջ ստացված, հայերի վրա գործված, զանազան անարդարութիւններ, հարստահարութիւններ և բարբարոսութիւններ նկարագրող պաշտօնական հեռագրիներ:

Վերջապէս յիշենք այստեղ և «Մշակի» ներկայ 1880 թւի առաջին համարներում տպված Վահան Վ. Պարտիզակցու Լըզըլումի անգլիական հիւպատոս

Տրօտտերին ներկայացրած ղեկուցումները (№№ 21—24):

Այս պէտք է ասել, որ մենք յիշում ենք այստեղ աղբիւրներից ամենագլխաւորները միայն... Թող թիւրքաց կառավարութիւնը կարգայ այդ բոլոր գրուածքները, որոնք նոյն իսկ թիւրքիայում հրատարակվեցան, որոնք ներկայացնում են ճշմարիտ ազգի յուսահատված, օրհասական աղաղակ և որոնց մենք արտատպեցինք կամ որոնցից մենք միայն օգուտ քաղեցինք, սուանց մեզանից ոչինչ աւելացնելու, հիմնեցինք մեր բոլոր դատողութիւնները թիւրքիայի վերաբերութեամբ:

Ինչի, ուրեմն, թիւրքաց կառավարութիւնը մեզ է մեղադրում, ինչի է արգելում նա մեր լրագրի մուտքը իր պետութեան սահմանների մէջ, երբ մեր բոլոր ասածներից և ոչ մինը հնարած իրողութիւն չէ, այլ եղել է միայն այն յուսահատական աղաղակի արձագանքը, որ նոյն իսկ թիւրքիայի հողի վրա ծնունդ առաւ, որ անդադար մեր ականջներին էր հասնում, բղկնելով թիւրքահպատակ հայի ճշմարիտ կուրծքից...:

Մենք միայն թարգման եղանք մեր համարին եղբայրների ազգականների և այժմ թիւրքիան կամենում է մեզ, ռուսահպատակներին արգելել ձայն հանելու, կամ գոնէ կամենում է արգելել

որ մեր ձայնը չը կարողանայ հասնել Բ. Դրան հպատակ ճշմարիտ, ոտնակոխ արած հայերի ականջին:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ

Ներկայ տարվայ «Փորձի» I տետրակի ընկերում տպած է պ. Պատկանանի պատուական յօդուածը—Համառոտ տեսութիւն հայ պատմական գրականութեան վերնագրով: Կիսնական հեղինակը այդ յօդուածի մէջ յառաջ է բերում ի միջի այլոց մի համառոտ ցուցակ զանազան տեղերի, որ գտնվում են հայկական ձեռագիրներ շատ կամ քիչ քանակութեամբ: Այդ ցուցակը չէ, ի հարկէ, լիակատար և ինքն հեղինակն էլ անշուշտ այդպէս է համարում դրան, որպէս այդ պարզ երևում է և յօդուածի վերջարտութիւնից: Վասն որոյ աւելորդ չեմ համարում աւելացնել այդ ցուցակի վրա իմ ունեցած տեղեկութիւնները, հրաւիրելով մեր բանասէրներին հետզհետէ փայտել այդ ցուցակը, որ մեծ նշանակութիւն ունի ազգային մատենագրութեան զարգացման համար:

Պ. հեղինակը ցոյց է տալի Փարիզի ազգային մատենադարանի մէջ (Bibliothèque Nationale) հայոց ձեռագիրների թիւը 260: Իսկ եւս 1877 թ. հինգ ամիս շարունակ պարսպելով այդ մատենադարանի մէջ ի միջի այլոց և հայոց ձեռագիրների հետազոտութիւնով, դոցա թիւը դոյս 273, ուրեմն 13 ձեռագրով աւելի: Արարատի մէջ (1878 թ., փետրվար) ես տպեցի իր ժամանակ Փարիզից ուղարկած թղթակցութեամբ մի յօդուած այդ մատենադարանի հայկական ձեռագիրների մասին բաւական ընդարձակ տեղեկութիւններով, ուր ցոյց տուած եմ ոչ միայն դոցա թիւը, այլ և բովանդակութիւնը ըստ զանազան գիտութիւնների և զբաղմունքների լուսանկարները, որբան այդ յայտնի էր յիշատակարաններից:

Թէ նրա այն օրվայ վարմունքը էֆէնդու հետ անխոնձ էր:

—Ես, սաաց նա,—դու գիտես, որ քեզ չեմ ջուրում իմ այս եօթն որդիներից, նա ցոյց տուց վեց որդու վրա, որ նստած էին և Ստեփանիկի վրա, որ կանգնած էր:

Կերտնին սովորութիւն ունէր միշտ և օթն որդիների անունով խօսել և նրանց անունով երգիլ, Ստեփանիկին եւ նրանց հետ հաշուելով, բայց չը գիտէր, որ վարդանի վաղուց արդէն յայտնի էր Ստեփանիկի աղջիկ լինելը:

—Այս եօթն որդիների արևը թող վկայ լինի, եթէ սուտ լինեմ ասելու, շարունակեց նա,—դու էլ իմ որդին ես. իմ տունը քո տունն է, գալիս ես, գնում ես, և որբան սիրող ուզում է, մնում ես. իմ դուռը քո առջև միշտ բաց է: Բայց պէտք է գիտնաս, որ այստեղ ուրիշ երկրների նման չէ, այստեղ թօմաս էֆէնդու նման մարդիկ՝ մեծ մարդիկ են, շատ մեծ մարդիկ... նրանք ինչ որ կարողան, կարող են կատարել: Այս պատճառով, նրանց պէտք է ակամայ յարգել և երբեմն նրանց խօսքերի ու արարածների մասին պէտք է լռուել... Ի՞նչ կարող ենք անել: Վրի շարագործի ձեռք, ասում է առակը, եթէ չես կարող կարել, պէտք է համբարն և զլիկ վրա դնես: Եֆէնդին, կարել է, քեզ մի մնաս չը կարողանայ հասցնել, որովհետև այստեղացի չես, բայց մենք քո փոխարէն պիտի տուենք նրա հասցրած մնասը: Դու խօսելու ես թուրքի առածը. Եֆէնդի վախեցաւ և սկսեց փայտին ծեծել...:

Կերտնու խօսքերը կրկին հաւաքեցին խնկրի իմանքը *): Նա պատասխանեց.

—Թուրքերի վերաբերութեամբ մեր կողմի հայեր մի լաւ առած ունեն, ասում են՝ Եֆէնդին

մինչև չը ծեծես, բարեկամ չի դառնայ: Ես թօմաս էֆէնդուն թուրքերից չեմ զանազանում, և շատ ցաւում եմ, թէ ինչու նրան մի լաւ չը ծեծեցի, թէ և նրա բարեկամութիւնը ինձ շատ հաճելի չէր կարող լինել:

Կերտնու երեկ խորոմները աւելի կնճրովեցան, երևում էր պատասխանը նրան դուր չեկաւ: Իսկ Ստեփանիկի դէմքի վրա փայլեց մի պայծառ ժպիտ, որը չէր կարող չը նկատել վարդանը: Նա դեռ կանգնած էր ոտքի վրա, և որպէս տան փառքի, սպասաւորութիւն էր անում, վարդանը հիացմունքով նայեց նրա վրա, մի և նոյն ժամանակ նրա մտքից անցան այս խօսքերը. «Ես միակ արարածը այս տան մէջ, որ համակրում է ինձ... որովհետև նա միայն է, որ զբաղեցի է այդ զարչելի մարդու լրբութիւնը...»:

—Դուք ինքներդ թող էք տալիս այս տեսակ ցած, անբարոյական, անիրաւ մարդերին բռնանալ մեզ վրա, շարունակեց վարդանը աւելի տաք կերպով.—որովհետև նրանց բոլոր չարագործութիւնների առջև աչքներդ փակած, համբարում էք: Ես հասկանում եմ, երբ թուրքը, ջուրը հային հարստահարում է, ձնչում է, և նրա կենսական բոլոր ուժերը խլելով նրանից, մահացնում է: Ես այդ հասկանում եմ, և մինչև անգամ բնական եմ համարում, որովհետև նրանք դարբնով այսպէս վարվել են հայի հետ և նոյն կերպով շարունակում են: Այդ դարձել է թուրքի և քուրդի համար մի տեսակ կենսական պահանջ, առանց որին նրանք հազիւ թէ կարող են ապրել: Բայց երբ որ հայը վարվում է իր համազգիների հետ աւելի վատթար, քան թէ թուրքը և քուրդը, այդ եղանակագործութեանը դժուար է համբարել: Ես այս խօսքերը էֆէնդու երեսին տեսցի, և նա մի բառ ևս չը գտաւ պատասխանելու:

—Ես դրանից վատը կասէի նրան, խօսակցութեան մէջ մտաւ Հայրապետը,—բայց հայր միշտ

մեզ խրատում է, թէ պէտք է լուս մնալ, թէ պէտք է զզոյ լինել... մի օր ազատութիւն կը լինի մեզ... պէտք է համբարել... չը գիտեմ, մինչև երբ պէտք է համբարել...:

—Մինչև Յիսուս Քրիստոսի գալուստը... հեզնորէն պատասխանեց վարդանը.—բայց, ամիսս, մինչև այն ժամանակը աշխարհի երեսին մի հայ էլ չի մնայ, որ իր ազատութիւնը տեսնէ. բոլորը բոլոր կամ թուրք դարձած կը լինեն...:

—Էւմբերութիւնը կեանք է... խօսեց ծերունին քարոզի ոճով.—Մեր տէրէրները, մեր վարպետները միշտ այդ են քարոզում մեզ: Ախար մի օր կը լինի, որ Աստուած կը մտաբերէ իր կորուսեալ ուխտներին... Պէտք է համբարել, դաւանել... Եւմբերութիւնը կեանք է...:

—Համբերութիւնը մահ է... պատասխանեց պ. Գուրուկչեանը, որ մինչև այն ժամանակ չէր խօսում և լուս լուս էր նրանց վիճաբանութիւնը, իրիտասարդի գունատ դէմքը այժմ բոլորովին դեղնեց և նրա նուրբ, նոյնպէս գունաթափ շրթունքը սկսեցին դողզողալ:

—Համբերութիւնը մահ է... կրկնեց նա վրդոված ձայնով.—գերեզմանի մէջ միայն մարդ սովորում է համբարող լինել... Մի այսպիսի հրէական համբերութիւնը, որ ունենք մենք, տանում է դէպի անդառնալի կորուստ: Հրէաները շատ համբարեցին, աշխարհի բոլոր հայածանցներին դիմացան, սպասելով, թէ կը յայտնվի մի Մեսիայ, որ կը վերանորոգէ սուրբ Երուսաղէմը և կը վերականգնէ Երուսաղէմի հին փառքը... և մինչև այսօր սպասում են... Բայց մենք մի այսպիսի ակնկալութիւն ևս չունենք, չը գիտեմ, էլ ինչ բանի ենք սպասում...:

—Մեր տէրէրները, մեր վարդապետները համբերութիւն են քարոզում... շարունակեց նա առաջվայ մտղձտ ձայնով.—Ախար նրանք քանդեցին մեր տունը և այս ստրկական վիճակին հաս-

ցրին մեզ, եթէ կայ մի բան, որ կարող է փրկել հարստահարված և ճնշված ժողովուրդներին, դա է—բողոքը, ինչ կերպով և յայտնվելու լինէր նա: Դժգոհութիւնը, արտուճիչը և իր վիճակից մի աւելի բարեբախտ վիճակի ցանկանալը—անա այն փրկարար շարժառիթները, որ կարող են մեզ ազատել ստրկութենից: Բայց համբերութեան մէջ խնդրվում են, մահանում են այս տեսակ բարձր ձգտումները...:

Կերտնին ոչինչ չը պատասխանեց: վարդանը և Հայրապետը բռնեցին երիտասարդի ձեռքը և բարեկամաբար սեղմեցին: Կերտնու միւս որդիները ոչինչ չը հասկացան և իրանց մտքում ասեցին—անա մի ուրիշ խնկր լուս...:

Կերտնին հրամայեց հիւրերի համար քնելու տեղ պատրաստել, իսկ ինքը որդիների հետ, բարձր գիշեր մաղթելով, հեռացան: Տան հարսներից մէկը, երեքը կայած, եկաւ անկողինները պատրաստեց: Օղայի մէջ ճրագը դեռ վառվում էր: Երկու հիւրերը իրանց անկողիններում երկար անքուն մնացին: Պարոն Գուրուկչեանը կրկին վառեց իր կիսատ մնացած սիգարը և սկսեց ծխել: վարդանը նկատեց նրան.

—Բարեկամ, ձեր լեզուն անհասկանալի է. դուք հազիւ թէ կարող կը լինէք այստեղ մի գործ չի նել... Ժողովրդի հետ խօսելու համար պէտք է հարեբաւոր առակներ և առածներ գիտնալ... Գիտեստու իր առակներով աւելի գործ չլինեց, քան թէ բարձր, վերացական քարոզներով:

—Այո, ես չը սովորեցի ժողովրդի լեզուն... պատասխանեց պ. Գուրուկչեանը և լռեց:

(Կը շարունակվի)

*) Իմաներ փոխաբերական մտքով դիմ կամ չար ոգիների նշանակութիւն ունի ռամիկ ժողովրդի լեզուում: